Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը նախապատրաստվում է նշելու սովետական պետության ստեղծող Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակը։ Դեկտեմբերի 27-ին կայացած ինստիտուտի գիտական խորհրդի նիստը հաստատեց այդ միջոցառումների պլանը։ Հրատարակության է պատրաստվում բանասիրական գիտությունների թեկնածու Զ. Ղուկասյանի «Կուսակցության լենինյան ուսմունքը և հայ գրականության մի քանի հարցեր» աշխատությունը։

ՀՍՍՀ ԳԱ հասարակական բաժանմունքը և ինստիտուտը նախատեսել են կազմակերպել գիտական նստաշրջան՝ նվիրված Վ. Ի. Լենինի կյանքին ու գործունեությանը, որտեղ պետք է կարդացվեն մի շարք զեկուցումներ՝ Լենինի գիտական ժառանգության և գրականագիտական արդի պրոբլեմների փոխհարաբերության բազմաթիվ հարցերի մասին։ Զեկուցումներով հանդես կգան բանասիրական գիտությունների դոկտորներ Ս. Սարինյանը՝ «Լև Տոլստոյին նվիրված Լենինի հոդվածների մեթոդոլոգիական նշանակությունը», Է. Ջրբաշյանը՝ «Արվեստի տեսության հարցերը Վ. Ի. Լենինի «Փիլիսոփայական տետրակներում», Ս. Աղաբաբյանը՝ «Անցյալի կուլտուրական ժառանգության գնահատման լենինյան չափանիշները», ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ղանալանյանը՝ «Վ. Ի. Լենինը և հայ բանահյուսության մի քանի հարցեր», բանասիրական գիտությունների թեկնածուներ Ս. Դարոյանը՝ «Ռուս վաթսունականները Վ. Ի. Լենինի գնահատմամբ», Ս. Մանուկյանը՝ «Վ. Ի. Լենինը և հայ մարքսիստական գրաքննադատությունը» թեմաներով։ Նստաշրջանում կկարդացվի նաև «Վ. Ի. Լենինի կերպարը հայ գրականության մեջ» թեմայով զեկուցում։

ԴԻՍԵՐՏԱՑԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՎՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1969 թ. հունվարի 14-ին Վրացական ՍՍՀ ԳԱ Ի. Ա. Ջավախիշվիլու անվան պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում կայացավ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Վարդ Հարությունի Բդոյանի դոկտորական դիսերտացիայի պաշտպանությունը «Հայաստանի երկրագործական մշակույթը» թեմայով։ Բազմավաստակ գիտնականի դիսերտացիոն աշխատությունը բարձր գնահատեցին նրա պաշտոնական ընդդիմախոսները՝ պատմական գիտությունների դոկտոր, ՎՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Ս. Ջիտայան, պատմական գիտությունների դոկտորներ Ա. Գ. Գալստյանը, Ա. Ս. Համբարյանը և պատմական գիտությունների թեկնածու Վ. Գ. Ջալաբաձեն։

Ավելի քան երկու տասնամյակի քրտնաջան աշխատանքի արդյունք հանդիսացող այս ստվարածավալ աշխատությունը հիմնականում ներկայացնում է երկրագործության երկու սիստեմ՝ բրիչային երկրագործությունը, որն ընդգրկում է էնեոլիթյան ժամանակաշրջանից մինչև մեր օրերն հասած նյութերը և արորային երկրագործությունը, որը ներառում է բրոնզեդարյան ժամանակաշրջանից մինչև 20-րդ դարի առաջին կեսի տվյալները։

Աշխատությանը կից տրված է հայ ժողովրդական երկրագործական գործիքներն ու աշխատանքային պրոցեսները պատկերող երկհատոր ալբոմ։

Աշխատությունը գրված է հնագիտական, մատենագրական, տնտեսագիտական, արխիվային, թանգարանային և առավելապես պատմա-ազգագրական ու հեղինակի կողմից հավաքած ազգագրական դաշտային հարուստ նյութերի խորը վերլուծության հիման վրա։

Վ. Հ. Բդոյանի սույն աշխատությունը արժեքավոր ներդրում է հայագիտության և հատկապես հայ ազգագրական գիտության մեջ։ Այդ մասին է վկայում մասնավորապես դիսերտանտի ընդդիմախոս, պրոֆեսոր Գ. Ս. Ջիտայայի կարծիքը. «Վ. Հ. Բդոյանի գիտական գործունեությանը բնորոշ է գիտական պրպտումների նպատակասլացությունը, հետազոտության ձևերի մեծ բազմազանությունն ու ճշմարտությանը հասնելու բծախնդրությունը, գիտական բարդ պրոբլեմներ լուծելու ասպարեզում՝ մեծ աշխատասիրությունն ու նախանձելի համառությունը։

ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ